ամենից սբց ; Եւ զպայլն ամ արարացէ , ըր.
մտանելն ՚ի դրունս ողորմութեց , որպ
արար ՚ի վեր անդր , առաջի դրանն նախ-
կնոյ եկեղցւյն ։

Նաեւ իւրաքանչիւր յեկղցջն քառորդաց ,
ասիցէ ՚ի խորոց կրդցի սղմսն , ըր նմին մի
հայրմեր եւ ողջոյն վս հգց քրստնին :

Եւ հետեւաբար յանձնարարասցէ ած_
այնոյ բարեպաշտութեն , զբարձրացումն
սբյ եկղցւյն կթղկեւ եւ զպիտանաւոր_
ութիւ նորին ; զծայրագոյն քհնյպետն ;
զեպիսկոպոսն պետոյն իւր զամ , մանա_
ւանդ զհոգեկանն ; զբարեպաշտ քրիս_
տոնեայս ; զազգականս , զբարեկամս ,
եւ զբարերարս իւրս :

Եւ ՚ի ճանպրհին ջանայցես միշտ պա_
հել զ համեստութի ; յիշելով թէ որ_
քան մարտիրսք սբք , եւ խոստովանօղք
քի ընթացեալք են ընդ այն , վշտակ_
րութ մարմնոյ , ջերմեռանդութ հոգւոյ ,
սիրելով զած , եւ փառաւորելով զսբ
անունն նր , կենօք եւ մահուամբ ։

Այսպ եւ դու , երթալն , եւ ՚ի դառ-
նալն , ՚ի մտանելն , եւ յելանելն , ունիցիս

զայս